

Բանալի բառեր՝ միգրացիայի որոշիչներ, միգրացիայի մակրո և միկրո մոդելներ, տնտեսական և քաղաքական ինստիտուտներ, սպասումներ, բարեկեցություն:

ՋՏԴ 331.556

ԻՆՉՈՒՐ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՄՈՒՄ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԸ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վտենախոսության թեմա՝
Սահմանադրականության և միգրացիայի
փոխազդեցության մոդելները 33 օրինակով

Գիտական ղեկավար՝
Ռուբեն ԳԵՎՈՐԳՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

Գագիկ ՉԱԽՈՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության մեջ
մաթեմատիկական մոդելավորման
ամբիոնի ասպիրանտ

Մարդկանց կողմից միգրացիայի պատճառների և դրա վրա ազդող գործոնների բացահայտումը միգրացիայի վերաբերյալ գրականության կենտրոնական հիմնախնդիրներից է: «Ինչու՞ են մարդիկ փոխում իրենց բնակավայրը» հարցին փորձել են պատասխան գտնել տարբեր ոլորտների գիտնականները, որոնց շարքում մեծ դեր ունեն մակրոտնտեսագետները, որոնց հետազոտությունները թե՛ տեսական, թե՛ էմպիրիկ բնույթ ունեն: Գիշտ է, պետք է փաստել, որ մի կողմից դեռևս չկա մեկ ընդհանրացված համաձայնեցված տեսություն միգրացիայի որոշիչների վերաբերյալ, և մյուս կողմից էլ առկա է մեծ բաց տեսական և էմպիրիկ աշխատանքների միջև: Ինչու՞ են միգրացիայի որոշիչների գնահատման մոդելներում երբեմն շատ են հեռավանում տեսական մոդելներից՝ գնահատումներում ընդգրկելով վերջիններում չներառված գործոններ, իսկ տեսական մոդելներում էլ ներառվում են գործոններ, որոնք պրակտիկայում դժվար է գնահատել, և շատ հաճախ որպես այդ գործոնների մոտարկումներ օգտագործվում են չափելի այլ փոփոխականներ:

Չեզոքությունները կատարվում են թե՛ ներքին և թե՛ արտաքին միգրացիայի որոշիչների ուսումնասիրման ուղղություններով, չնայած պետք է նշել, որ երկրի տարբեր շրջանների միջև միգրացիոն հոսքերը (ներքին միգրացիա) ավելի հաճախ են հայտնվում գիտնականների ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված է նրանով, որ սովորաբար ներքին միգրացիայի վերաբերյալ տվյալները ավելի հասանելի և ամբողջական են, մինչդեռ միջազգային միգրացիայի վերաբերյալ տվյալները սակավ են, և տարբեր երկրների կողմից հավաքագրվող տվյալների միջև առկա է տարասեռություն: Միգրացիայի վերաբերյալ գրականության այս հատվածի մյուս բնորոշ գիծն էլ այն է, որ հետազոտությունների ամուսնի բաժինը ընկնում է զարգացած երկրներում միգրացիայի հետազոտությանը, քանի որ հիմնականում այդ երկրներում են առկա միգրացիոն հոսքերի վերաբերյալ բավարար տվյալներ բարձրորակ հետազոտություններ իրականացնելու համար:

Չեզոքությունները միգրացիայի որոշիչները սովորաբար բաժանում են մի քանի խմբերի: Ռ. Ռամոսը և Ժ. Սուրինյակը առանձնացնում են հինգ հիմնական խմբեր՝ **ժողովրդագրական, աշխարհագրական, տնտեսական, քաղաքական**, իսկ վերջին խումբը անվանում են «**սոցիալական, պատմական և մշակութային**»: Նրանք միգրացիայի որոշիչները դասակարգում են մեկ ըստ միգրացիոն ուղարկող երկրում իրախորդ և միգրանտ ընդունող երկրում ձգող գործոնների: Այդուհանդերձ 1-ում ներկայացված են միգրացիայի որոշիչների նրանց առաջարկած ցանկը՝ համալրված մեր կողմից գրականության ուսումնասիրության ընթացքում բացահայտված այլ գործոններով [1]:

Էմպիրիկ մոդելների գերակշիռ մասը կառուցված է մոդիֆիկացված գրավիտացիոն մոդելի կամ մարդկային կապիտալի մոդելի հիման վրա, հետևաբար գրեթե բոլոր մոդելներում բացատրող փոփոխականների շարքում առկա է (են) փոփոխական(ներ) եկամուտների կամ տարբեր շրջաններում դրանց տարբերությունների վերաբերյալ, ընդ որում՝ որպես այդպիսի փոփոխական վերցվում են հետևյալ ցուցանիշները՝ տարբեր շրջաններում միջին իրական աշխատավարձը, մեկ շնչի հաշվով ՉՆԱ-ն, ՉՆԱ-ի աճի տեմպը, տնտեսության որոշ հատվածների (գյուղատնտեսական, արդյունաբերական կամ ծառայությունների ոլորտի) միջին եկամուտները և այլն: Հաճախ են հանդիպում նաև փոփոխականներ միգրացիոն ծախսերի վերաբերյալ: շրջանների միջև հեռավորություն, ընդհանուր լեզվի առկայություն (որպես կեղծ փոփոխական), ընդհանուր սահմանի առկայություն, պատմական անցյալի ընդհանրություններ (զաղութային անցյալ), հմտությունների փոխանցման դյուրինություն և այլն: Շատ են նաև մոդելները, որոնք ներառում են փոփոխականներ միգրացիոն քաղաքականությունների վերաբերյալ, որոնք կարող են լինել ընդհանուր և փոխադարձ՝ երկու երկրների միջև: Վիզային ռեժիմ, վիզայի արժեք և այլն: Ուղարկող և ընդունող երկրների զարգացվածության աստիճանը մոդելներում արտահայտվում է տարբեր ցուցանիշներով՝ ուրբանիզացման մակարդակ, մշակող արդյունաբերությունում զբաղվածների մասնաբաժին կամ տարբեր համաբնակչության կիրառություն (օրինակ՝ Ֆրոդըմ Հաուսի համաթիվը, որը ներառում է տնտեսական ազատության, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ցուցիչները) և այլն:

Օ. Բողվարստուն ու **Հ. Վան դեն Բերգը** ուսումնասիրել են միգրացիայի որոշիչների վերաբերյալ ինը էմպիրիկ աշխատանքներ, որոնք վերաբերում են ինչպես համաշխարհային մասշտաբով, այնպես էլ որոշակի երկրների խմբերի (զարգացած 14 երկրներ) և առանձին երկրների (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և Գերմանիա) միգրացիոն հոսքերի ուսումնասիրությանը: Նրանք նկատում են, որ այդ հետազոտություններից ութում եկամուտների տարբերության և միգրացիոն հոսքերի միջև առկա է դրական կախվածություն, այսինքն՝ ընդունող և ուղարկող երկրների միջև իրական եկամուտների հարաբերակցության աճը (նվազումը) մեծացնում (նվազեցնում) է ուղարկող երկրներից միգրանտների

հոսքերի ծավալները [2]: **Ռ. Ռամոսը** և **Ժ. Սուրինյակը**, օգտագործելով 1960, 1970, 1980, 1990 և 2000 թվականների համար համաշխարհային միգրացիոն մատրիցները, հետազոտել են Եվրոպային հարևան երկրների և Եվրոպական Միության երկրների միջև միգրացիոն հոսքերը և նրանք նույնպես հաստատում են, որ եկամուտների տարբերությունները կարևոր դեր ունեն երկրների միջև միգրացիան բացատրելու և կանխատեսելու հարցում [1]:

Աղյուսակ 1.
Միգրացիայի որոշիչները

	Հրահրող գործոններ	Զգող գործոններ
Ժողովրդագրական	Բնակչության աճ	
	Գերբնակեցվածություն	
	Բարձր ծննդաբերության մակարդակ	
Աշխարհագրական	Հեռավորություն	
	Ընդհանուր սահմանի առկայություն	
Տնտեսական	Աղքատություն	Բարձր եկամուտների ակնկալիքներ
	Սով	Ավելի բարվոք ապրելու պայմանների հեռանկարներ
	Գործազրկություն	Անձնական կամ մասնագիտական զարգացման հեռանկարներ
	Ցածր աշխատավարձեր	Զբաղվածության ակնկալիքներ
	Տարրական կրթության և հիմնական բժշկական ծառայությունների բացակայություն	Հարկերի ցածր դրույքներ
	Հարկերի բարձր դրույքներ	Տնտեսական ազատություն
Քաղաքական		Կրթական հնարավորություններ
	Ընդհարումներ, անվտանգությանը խանգարող հանգամանքներ, բռնություն	Անվտանգություն
	(Քաղաքացիական) պատերազմ	Քաղաքական ազատություն
	Վատ կառավարում	Օրենքի գերակայություն
	Պարտադիր զինվորական ծառայություն	Խաղաղություն
	Կոռուպցիա	
Սոցիալական, պատմական և մշակութային	Մարդու իրավունքների խախտումներ	Ընտանիքի վերամիավորում
	Խտրականություն ըստ ռասայի, սեռի կամ էթնիկ ծագման	Սվյուռքի առկայություն
	Կրոնական հետապնդում	Խտրականության բացակայում
		Ընդհանուր լեզու
		Պատմական, գաղութային անցյալ
		Անձնական ազատություն
		Կրոնական ազատություն

Օ. Բողվարստնի ու **Յ. Վան դեն Բերգի** վերոնշյալ հետազոտության շրջանակներում ինը հետազոտություններից ութի մեջ դիտարկվել են նաև միգրացիայի ծախսերի և միգրացիոն հոսքերի միջև կախվածությունը: Պարզվել է, որ բոլոր մոդելներում առկա է վիճակագրորեն նշանակալի հակադարձ կախվածություն այդ մեծությունների միջև:

Ս. Բերտոլին, Յ. Բուրբերը և **Ժ. Մորազան** ստուգել են միգրացիայի հոսքերի և սպասումների միջև կապի առկայությունը Գերմանիայի և Եվրոպական Տնտեսական Տարածքի (անգլ.՝ European Economic Area, EEA) միջև 2006-2012 թվականներին փոխադարձ միգրացիայի տվյալների հիման վրա: Պարզվել է, որ Եվրոպական երկրներում 10 տարի ժամկետով պետական պարտատոմսերի նկատմամբ սպասումների և միգրացիոն հոսքերի միջև գոյություն ունի վիճակագրորեն նշանակալի կապ, այսպես միգրացիայի առաձգականությունը 10 տարի ժամկետով պետական պարտատոմսերի եկամտաբերության նկատմամբ կազմել է 0.14: Նրանք նաև ցույց են տալիս, որ ընդունող երկրում գործազրկության մակարդակը նույնպես ազդում է դեպի այդ երկիր մարդկանց հոսքի վրա [3]:

Հետազոտողների մի մասն էլ փորձում է տեսնել, թե միգրացիայի հոսքերի վրա ինչ ազդեցություն ունեն միգրանտների ցանցերը: **Ս. Բայնեն, Ֆ. Դոքեն** ու **Չ. Օզդենը** ցույց են տալիս, որ երկու երկրների միջև փոխադարձ միգրացիոն ֆոնդի (միգրանտների քանակի) 10% ավելացումը հանգեցնում է հաջորդ տասը տարիների ընթացքում այդ երկրներում փոխադարձ միգրացիոն ֆոնդի 4% աճի: Երբ դիտարկում ենք ՏՀԶԿ-ի (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, անգլ.՝ OECD) երկրները, ապա առաձգականությունը ավելի է բարձրանում, և այն ավելի բարձր է ցածր որակավորմամբ աշխատուժով միգրանտների մոտ ի համեմատ բարձր որակավորմամբ աշխատուժով միգրանտների [4]:

Ս. Բերտոլին և **Ժ. Մորազան** էլ ուսումնասիրում են երկու երկրների փոխադարձ միգրացիոն քաղաքականությունների (միգրացիոն հոսքերի վերաբերյալ որոշակի համաձայնագրեր, օրինակ՝ վիզային ռեժիմի ընդունում կամ վիզաների քանակի սահմանափակում և այլն) ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրա: Նրանք ցույց են տալիս, որ երկու երկրների միջև վիզային ռեժիմի ընդունումը նվազեցնում է փոխադարձ միգրացիոն հոսքերը 40-47%-ով և ավելացնում է դեպի այլ երկրներ միգրացիոն հոսքերը 3-17%-ով [5]:

Ընդհանուր լեզվի և մշակութային կապերի առկայությունը հետազոտողների կողմից հիմնականում մոդելներում արտահայտվել է այդ գործոնների համար կեղծ (անգլ.՝ dummy) փոփոխականների ներմուծմամբ, իսկ **Ս. Բեյթը** և **Ս. Էդերվինը** նույնիսկ լեզվաբանների կողմից առաջարկվող լեզվաընտանիքների ծառն են օգտագործել անկախ փոփոխականների համար մոտարկումներ ստանալու համար. օրինակ՝ իսպանացի ավելի հեշտությամբ կհարմարվի Անգլիայում և Գերմանիայում, քան Չինաստանում, չնայած, որ երեք երկրների հետ էլ ընդհանուր լեզու չունի: Հիմնական արդյունքները հետևյալն են. նման կամ մոտ լեզուներ ունենալու հանգամանքը (օրինակ՝ գերմաներեն և հոլանդերեն)

մեծացնում է երկու երկրների փոխադարձ միգրացիոն հոսքերի ծավալները, նույնը վերաբերում է նաև կրոնների «նոտիկությունը» [6]:

Մեր ուսումնասիրած գրականության մեջ առկա են հետազոտություններ՝ նվիրված միգրացիայի և կոռուպցիայի միջև կախվածության դիտարկմանը: Յու. **Դիմանտը, Տ. Կրիգերը և Գ. Մեյերեբը**, օգտագործելով 1985-2000 թվականների համար 111 երկրների տվյալներ, վստահելի եզրահանգման են գալիս, որ կոռուպցիան հանդիսանում է հրահրող գործոն երկրից մարդկանց արտագաղթի համար՝ հատկապես խթանելով բարձր որակավորմամբ աշխատուժի արտագաղթը [7]: Կոռուպցիայի և արտագաղթի միջև դրական կախվածության մասին վարկածը նաև հաստատվում է **Ա. Քուրայի և Ֆ. Շնայդերի** աշխատանքում: Նրանք ուսումնասիրում են 1995-2010 թվականների համար դեպի ՏՀԶԿ երկրներ միգրացիայի տվյալները և բացահայտում են, որ կոռուպցիայի աճին զուգահեռ աճում է բարձր կրթություն ունեցող մարդկանց արտագաղթի գործակիցը: Միջին և ցածր կրթության մակարդակ ունեցողների մոտ կոռուպցիայի աճը մինչև ինչ-որ մակարդակ հանգեցնում է միգրացիայի գործակցի աճի, ապա այդ աճը կանգ է առնում և սկսում է նվազել, այսինքն՝ ունի հակադարձ U-աձև տեսք [8]:

Վերջին ժամանակներս միգրացիայի վերաբերյալ ենթադրյալ գրականության զարգացման առանձնահատկություններից է այնպիսի մոդելների կառուցումը, որոնց մեջ առկա են փոփոխականներ երկրի ինստիտուցիոնալ որակի վերաբերյալ: Ստորև ներկայացնենք այդ ուղղությամբ կատարված հիմնական աշխատանքները: Ինչպես կտեսնենք, այդ աշխատանքների մեծ մասը կատարվել են 2010-ական թվականներին՝ պայմանավորված նոր տվյալների բազաների հասանելիությամբ:

Գ. Բերտոչին և Զ. Ստրոգին առաջին անգամ միջազգային միգրացիայի որոշիչների բացահայտման իրենց մոդելում տնտեսական և ժողովրդագրական գործոնների հետ ներառում են նաև ինստիտուցիոնալ գործոններ, մասնավորապես՝ ինստիտուցիոնալ որակի, քաղաքական ինստիտուցիոնալ և միգրացիոն ինստիտուցիոնալ վերաբերյալ համաթվեր, որոնք հաշվարկվում են հետևյալ ցուցիչների հիման վրա՝ ժողովրդավարություն, ընտրական իրավունք, հանրային կրթության քաղաքականություն, քաղաքացիության օրենքներ, միգրացիոն քաղաքականություն և այլն: 1870-1910 թվականների տվյալների բազայի համար գնահատումներ կատարելով՝ նրանք պարզում են, որ տնտեսական և ժողովրդագրական գործոնները միգրացիոն հոսքերի վրա ազդող առավել կարևոր գործոններն են, սակայն ինստիտուցիոնալ նշանակալի դեր ունեն այդ հոսքերի ծավալների ձևավորման ժամանակ [9]:

Մեկ այլ հետազոտություն էլ դիտարկում է տնտեսական և քաղաքական ազատության աստիճանի ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրա: **Ն. Էշայը** վերլուծում է ՏՀԶԿ երկրներում 2000 թվականի դրությամբ միգրանտների քանակի և 2001 թվականից մինչև 2006 թվական միգրանտների հոսքերի վերաբերյալ տվյալները և ցույց է տալիս, որ քաղաքական ազատություն փոփոխականը դրական է ազդում միգրացիոն հոսքերի վրա [10], իսկ **Մ. Նադը Նեջադը և Է. Յանգը** ցույց են տալիս, որ տնտեսական ազատությունը հանդիսանում է միգրանտներին ձգող գործոն ընդունող երկրներում [11]:

Ա. Նիֆուն և Գ. Վեբստերն, ուսումնասիրելով Իտալիայում ներքին միգրացիայի որոշիչները, հատկապես երկրի հարավից հյուսիս միգրացիան, նկատում են, որ ինստիտուցիոնալ որակը նշանակալի ազդեցություն ունի միգրացիոն հոսքերի վրա: Առավել կարևոր են ինստիտուցիոնալ որակի հետևյալ բաղադրիչները՝ օրենքի գերակայություն, տեղական քաղաքականությունների որակ և սոցիալական կապիտալ [12]:

Ա. Բերգը, Ի. Միլիկնան և Թ. Նիլսոնը իրենց առաջարկած մոդելներում կախյալ փոփոխականի հաշվարկման համար օգտագործում են 1995-2010 թվականների ընթացքում հնգամյա փոխադարձ միգրացիոն հոսքերի վերաբերյալ տվյալները, իսկ ինստիտուցիոնալ գործոնության որակի վերաբերյալ անկախ փոփոխականները վերցվում են Կառավարման համաշխարհային ցուցանիշների (անգլ.՝ Worldwide Governance Indicators, WGI) ցանկից: Այդ ցուցանիշներն են՝ կառավարման արդյունավետություն, կոռուպցիայի վերահսկողություն, կարգավորման որակ, օրենքի գերակայություն, քաղաքական կայունություն, ծայր և հաշվետվողականություն: Մյուս անկախ փոփոխականները հետևյալն են՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ընդհանուր սահմանի առկայություն, լեզվի, պատմության ընդհանրություններ և ծայրահեղ աղքատության մակարդակ: Նախ հեղինակները հիմնվում են Բերտոչիի և Ստրոգիի այն գաղափարի վրա, որ միգրանտները միգրացիայի որոշումը դիտարկում են որպես երկարաժամկետ հորիզոնով որոշում, հետևաբար նրանց որոշումը ավելի շատ պայմանավորված է սպասվող ապագա եկամուտներից, քան եկամուտների ներկա մակարդակից (մարդիկ նաև մտածում են իրենց սերունդների մասին): Մյուս կողմից էլ վերջին շրջանում լայն տարածում և հիմնավորում են ստանում այն գաղափարները, որ երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացումը մեծապես պայմանավորված է ինստիտուցիոնալ զարգացման ներկա մակարդակից: Հետևաբար մարդիկ միգրացիայի որոշում կայացնելիս այլ գործոնների հետ նաև դիտարկում են ներկա պահին իրենց և այլ երկրներում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը: Գնահատումների արդյունքները հետևյալն են՝ երկրում ինստիտուցիոնալ որակը միգրացիայի համար հրահրող գործոն է, ավելին, այն ինստիտուցիոնալ, որոնք ուղղակիորեն կապված են մարդու կյանքի հետ՝ արդյունավետ բյուրոկրատիա և կոռուպցիայի կառավարում, հանդես են գալիս որպես ուժեղ ձգող գործոն ընդունող երկրների համար [13]:

Հայաստանում միգրացիայի միտումները և պատճառները նույնպես հայտնվել են հայ և արտասահմանյան հեղինակների ուշադրության կենտրոնում: Ինչպես և միջազգային գրականության դեպքում է, այստեղ էլ ենթադրյալ վերլուծությունները կատարվել են երկու հիմնական ուղղությամբ՝ միգրացիայի վրա ազդող գործոնների՝ որոշիչների հետազոտություն և միգրացիայի հետևանքների հետազոտություն:

Վերջին տարիների միգրացիայի միտումների և հետևանքների վերաբերյալ առավել ուշագրավ աշխատանքներից է **Զ. Սարգսյանի, Զ. Անտոնյանի և Կ. Խաչատրյանի** «Միգրացիա. միտումներ, հետևանքներ» աշխատանքը: Հեղինակները պարզում են, որ հարցվածների մոտ արտագաղթելու ցանկություն ունեցող անձանց մասնաբաժինը բավականին բարձր է, ընդ որում՝ նախորդ տարիների համեմատ այդ մարդկանց մեջ մեծացել է երիտասարդների և կանանց մասնաբաժինը: Վերջին տարիներին նաև փոխվել է միգրացիայի նկատմամբ մարդկանց վերաբերմունքը: Այժմ մարդիկ ավելի են կարևորում արտագաղթելու դերը իրենց երկարաժամկետ հեռահար պլանավորման հարցում: Եթե նախկինում՝ հատկապես անկախացումից հետո 10-15 տարիների ընթացքում, մարդիկ, միգրացիայի դիմելով, փորձում էին լուծել կարճաժամկետ խնդիրներ կապված ընտանիքի կենսապահովման հետ, ապա այժմ մարդիկ միգրացիան դիտարկում են որպես իրենց ապագայում ներդրում կատարելու լուրջ հնարավորություն: Երիտասարդները փորձում են մեկնել արտերկիր՝ հիմնականում զարգացած երկրներ, կրթություն ստանալու և դրա միջոցով իրենց աշխատանքային կարիերան ավելի բարձր պայմաններով սկսելու նպատակով, իսկ միջին և միջինից բարձր տարիքի անձինք ձգտում են միգրացիայի միջոցով իրենց և իրենց երեխաների համար ապրելու առավել բարենպաստ պայմաններ ապահովել: Հեղինակների հիմնական առաջարկությունները վերաբերում են պետության կողմից հանրային քաղաքականության բարելավմանը՝ հատկապես կարևորելով գործարար միջավայրի և կրթության ոլորտում անհրաժեշտ փոփոխությունները, որը թույլ կտա ստեղծել նոր

աշխատատեղեր և բարձրացնել աշխատողների ունակությունների և աշխատանքի շուկայում պահանջարկի համապատասխանությունը [14]:

Ռ. Նուրեեվի և Ա. Մանուկյանի աշխատանքը նվիրված է 2000-2011 թվականներին Հայաստանից դեպի Ռուսաստան և դեպի Եվրամիություն միգրացիայի որոշիչների բացահայտմանը: Մոդելների գնահատումների հիմնական արդյունքները ցույց են տալիս, որ երկու ուղղություններով միգրացիայի վրա վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն ունեն նախորդ տարում միգրացիայի զուտ մնացորդը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ների հարաբերակցությունը և ամուսնությունների թվաքանակը և բացասական Ձինի ինդեքսը և գործազրկության մակարդակը [15]:

Արտագաղթի և դրամական փոխանցումների վրա ազդող գործոնների մոդելավորմանն է նվիրված **Ա. Շիրխանյանի** հետազոտությունը: Հեղինակը օգտագործում է ԱՎԾ-ի կողմից 2013թ. անցկացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալները և էկոնոմետրիկ երկբայլ պրոբիթ մեթոդը արտագաղթի և դրամական փոխանցումների որոշիչները բացահայտելու համար: Մոդելների գնահատման արդյունքում ստացվող հիմնական եզրակացություններն են՝ ընտանիքի գլխավորի աշխատանք ունենալու հանգամանքը նվազեցնում է միգրացիայի դիմելու հավանականությունը, սակայն կրթության աստիճանը չի ազդում այդ հավանականության վրա: Միջին և միջինից բարձր եկամուտ ունեցող ընտանիքները ավելի մեծ հավանականությամբ են միգրանտ ունենում և դրամական փոխանցումներ ստանում [16]: Ա. Շիրխանյանը մեկ այլ հետազոտության շրջանակներում ուսումնասիրում է վերջին տարիների ընթացքում միգրացիայի և դրամական փոխանցումների միջև կապը: միգրացիոն ցանցերի առկայությունը և տնային տնտեսության միջինից բարձր կենսամակարդակ ունենալու հանգամանքը դրական են ազդում ընտանիքում միգրանտ ունենալու հավանականության վրա, իսկ ընտանիքի գլխավոր անդամի զբաղվածության և բարձրագույն կրթություն ունենալու հանգամանքը՝ բացասական [17]:

ՀՀ-ից արտագաղթի որոշիչների ուսումնասիրությանն է նվիրված նաև **Ա. Գրիգորյանի** աշխատանքը: Նա բացահայտում է, որ ընտանիքում միգրանտ ունենալու և դրամական փոխանցումներ ստանալու հանգամանքը մեծացնում է անհատի միգրացիայի նկատմամբ հակվածությունը: Միգրացիայի որոշումը կախված չէ անհատի կրթության տարիներից, այնինչ՝ անձի աշխատանք ունենալու հանգամանքը դրական է ազդում միգրացիոն հակումների վրա: Հեղինակը օգտագործել է Հետազոտական Ռեսուրսների Կոլեկայան Կենտրոնի կողմից 2011-2012 թվականներին անցկացված հարցումների արդյունքները, որոնք մոդելավորվել են եռաբայլ փոքրագույն բառակուսիների մեթոդով: Մակրոտնտեսական մոդելի նկատմամբ VAR մոդելի կիրառումն էլ ցույց է տվել, որ լրացուցիչ դրամական փոխանցումները ծնուն են նոր միգրացիոն հոսքեր [18]: Հետագայում հեղինակը տեսական մոդելը ընդարձակում է՝ գործոնների շարքը նոր փոփոխականներով համալրելով, ինչպիսիք են երկրի քաղաքական վիճակի, տնտեսական վիճակի նկատմամբ անհատների վերաբերմունքը և այլն: Պարզվում է, որ հատկապես երիտասարդ տնային տնտեսությունները միգրացիայի տեսանկյունից առավել զգայուն են երկրի քաղաքական ինստիտուտների որակի նկատմամբ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ապագայի բարեկեցությունը զգալիորեն կախված է ներկայիս ինստիտուտների գործունեության արդյունավետությունից [19]:

Եզրակացություն: Ինչպես տեսանք, միգրացիայի որոշիչների վերաբերյալ ենպիրիկ հետազոտությունները բավականին շատացել են հատկապես վերջին տարիների ընթացքում: Դա պայմանավորված է նախևառաջ 20-րդ դարավերջին և 21-րդ դարակազմի գիտնականների և քաղաքական գործիչների կողմից միգրացիայի վերաբերյալ հետաքրքրվածության կտրուկ աճով, ինչպես նաև միջազգային միգրացիոն հոսքերի և տարբեր երկրներում միգրանտների քանակների վերաբերյալ նոր տվյալների հասանելիությամբ: Եթե սկզբնական շրջանում միգրացիայի հոսքերը և դրանց փոփոխությունները բացատրող գործոնների շարքում դիտարկվում էին հիմնականում եկամուտների տարբերությունների, ծախսերի, տարբեր երկրների, շրջանների միջև ընդհանրությունների և այլ գործոնների վերաբերյալ փոփոխականներ, ապա վերջին շրջանում՝ հատկապես 2008-2010 թվականներից սկսած, հեղինակները մոդելներում ներառում են նաև երկրի ինստիտուտների գործունեության որակի վերաբերյալ փոփոխականներ:

Միգրացիայի որոշիչների վերաբերյալ գրականության ուսումնասիրության հիմնական արդյունքները հետևյալն են՝

1. կան հետազոտություններ, որտեղ ավանդական փոփոխականները՝ տնտեսական և ժողովրդագրական գործոնները (տարբեր շրջանների միջև եկամուտների անհավասարություն, գործազրկության մակարդակ, սպասումներ և այլն) կարևոր դեր չունեն միգրացիան բացատրելու հարցում, սակայն մոդելների մեծ մասում այդ ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի է,

2. գրավիտացիոն մոդելների հիմնական փոփոխականները՝ բնակչության քանակը ու ընդունող և ուղարկող շրջանների միջև հեռավորությունը ավելի մեծ հաջողությամբ բացատրում են փոքր տարածություններ ընդգրկող միգրացիան՝ ներքին միգրացիան. վերջին տասնամյակների ընթացքում տրանսպորտային և հաղորդակցության ծառայությունների զարգացումը էականորեն նվազեցրել է միգրացիայի հետ կապված ծախսերը,

3. երկրների միջև առկա պատմական, լեզվային կամ ինստիտուցիոնալ նմանությունները նշանակալի դեր ունեն մարդկանց կողմից միգրացիայի ուղղությունն ընտրելու հարցում,

4. երկրների ընդհանուր և ուրիշ երկրների հետ փոխադարձ միգրացիոն քաղաքականությունները նույնպես ազդում են միգրացիոն հոսքերի վրա,

5. ի վերջո, երկրում ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը կարող է լուրջ գործոն հանդիսանալ միգրացիայի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում, ընդ որում՝ նույնիսկ միևնույն երկրի տարբեր շրջաններում ինստիտուցիոնալ զարգացվածության աստիճանը կարող է հանգեցնել շրջանների միջև միգրացիոն տեղաշարժերի:

Օգտագործված գրականություն

1. Ramos, R., & Surinach, J., 2016. A Gravity Model of Migration Between the ENC and the EU. *Tijdschrift voor Economische en Sociale Geografie*, Vol. 108, No. 1, pp. 22-35.
2. Bodvarsson, O. B., Van den Berg, H., 2013. *The Economics of Immigration: Theory and Policy*. Springer-Verlag New York, p. 74.
3. Bertoli, S., Brucher, H., & Moraga, J., 2013. The European Crisis and Migration to Germany: Expectations and the Diversion of Migration Flows. *IZA Discussion Papers*, No. 7170.
4. Beine, M., Docquier, F., & Ozden, C., 2009. Diasporas. *Journal of Development Economics*, Vol. 95, No. 1, pp 30-41.
5. Bertoli, S., & Moraga, J., 2012. Visa Policies, Networks and the Cliff at the Border. *IZA working paper No. 7094*, Bonn.

6. Belot, M., & Ederveen, S., 2012. Cultural barriers in migration between OECD countries. *Journal of Population Economics*. Vol. 25, No. 3, pp 1077–1105.
7. Dimant, Eug., Krieger, T., & Meierrieks, D., 2013. The effect of corruption on migration, 1985-2000. *Applied Economics Letters*, Vol. 20, No. 13, pp. 1270-1274.
8. Cooray, A., & Schneider, F., 2014. Does Corruption Promote Emigration? An Empirical Examination. *IZA discussion paper No. 8094*.
9. Bertocchi, G., & Strozzi, CH., 2008. International Migration and the Role of Institutions. *Public Choice*, Vol. 137, No. 1–2, pp 81–102.
10. Ashby, N., 2010. Freedom and International Migration. *Southern Economic Journal*, Vol. 77, No.1, pp. 49-62.
11. Naghsh Nejad, M., & Young, A., 2014. Female Brain Drains and Women’s Rights Gaps: A Gravity Model Analysis of Bilateral Migration Flows. *IZA discussion paper No. 8067*.
12. Nifo, A., & Vecchione, G., 2013. Do Institutions Play a Role in Skilled Migration? The Case of Italy. *Regional Studies*, Vol. 48, No. 10, pp. 1628-1649.
13. Bergh, A., Mirkina, I., & Nilsson, Th., 2015. Pushed by Poverty or by Institutions? Determinants of Global Migration Flows. *IFN Working Paper No. 1077*.
14. Սարգսյան, Հ., Անտոնյան, Ք., և Խաչատրյան, Կ., 2013: Միգրացիա. միտումներ, հետևանքներ: *Հեղինակային իրավունք*, Երևան:
15. Нуреев, Р., и Манукян, А., 2012. Факторный анализ причин миграции населения республики Армения в начале XXI века. *Journal of Economic Regulation (Вопросы регулирования экономики)*, Вып. 3, No. 3, стр. 11-27.
16. Շիրխանյան, Ա., 2016: Արտագաղթի և դրամական փոխանցումների շարժառիթները Հայաստանի Հանրապետությունում: *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր*, Հ. 1, No. 4, էջեր 397-401:
17. Շիրխանյան, Ա., 2017: Դրամական փոխանցումների վրա արտագաղթի ազդեցության մոդելավորումը Հայաստանի Հանրապետությունում: *Ալլընտրանք գիտական հանդես*, Հ. 1, 224-229:
18. Grigoryan, A., 2014. Who Else Emigrates from Armenia? Evidence from Intentions. *Working paper, American University of Armenia*.
19. Grigoryan, A., 2016. Emigration intentions: theory and evidence. *Working paper, American University of Armenia, EERC*.

**Ներկայացվել է 26.01.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.**